**Արձանագրություն N 4**

**ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի**

**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 25 հուլիսի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ալեյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Ա. Խաչատրյանը և Ա. Առուշանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Հանձնաժողովի նիստի օրակարգում քննարկվող հարցերն են՝

Մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ եզրակացության քննարկման արդյունքները:

## 2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ <<Բիդեք>>, <<ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ>> և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ները սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Քննարկման ընթացքում նշվեց, որ

1. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը սահմանված կարգով հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով հրավերի 8.22-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը և տեղեկությունները (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

2. <<Բիդեք>> ՍՊԸ-ի կողմից ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով հրավերի հավելված 3.2-ի <<կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին>> տեղեկանքի <<գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը>> սյունակում անհրաժեշտ է լրացնել համապատասխան մասնագետների կողմից կատարված աշխատանքները:

3. <<ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից անահրաժեշտ է ներկայացնել.

- <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշը գնահատելու համար՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների տեխնիկական անձնագրերը և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները,

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը գնահատելու համար՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները, իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները, ինչպես նաև ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով հրավերի հավելված 3.2-ի՝ տեղեկանքի <<գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը>> սյունակում լրացնել համապատասխան մասնագետների կատարած աշխատանքները:

- <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը գնահատելու համար՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ

պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

4. <<Գազկոմշին>> ՍՊԸ-ի կողմից անահրաժեշտ է, <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը գնահատելու համար, ՁԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով հրավերի հավելված 3.2-ի՝ տեղեկանքի <<գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը>> սյունակում լրացնել համապատասխան մասնագետների կատարած աշխատանքները և տրամադրել Գուրգեն Սարգսյանի (տեխնիկ-հողաշինարար) վավեր անձնագրային տվյալները:

## 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

12.01.2019թ-ին հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիսների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՁԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից 17.07.2019թ.-ի տրամադրված տեղեկատվության համաձայն 1-ին չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<Բիդեք>> ՍՊԸ-ի և 3-րդ և 4-րդ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից առկա են հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ (կցվում է):

## 4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը որոշեց՝

ՁԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով մրցույթի 1-ից 4-րդ չափաբաժինների համար <<Բիդեք>> ՍՊԸ-ի, <<ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ-ի և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները լիարժեք գնահատելու համար, առաջարկել ընկերություններին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

1-ից 4-րդ չափաբաժիններով արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու դեպքում 1-ին տեղ զբաղերած մասնակիցների հայտերը կմերժվեն:

## 5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ---------- | Կ. Ալեյան |
| Անդամներ | ---------- | Է. Մխիթարյան |
| | ---------- | Ա. Խաչատրյան |
| | ---------- | Ա. Առուշանյան |
| Քարտուղար | ---------- | Ա. Սարգսյան |